ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «20» հունիսի, 2016 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 28-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԹԵՄԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 18-ի N 1269-Ն որոշման հավելված 1-ի 12-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետերը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Կազմակերպել «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի և Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջեվանի Թեմի կողմից անցկացվող հայագիտական հետազոտությունների նախագծերի աջակցության մրցույթը»:
2. Հաստատել մրցույթի հրավերի փաթեթը՝ համաձայն Հավելվածի:
3. ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին (պետ Գ. Մելիքսեթյան)՝ ապահովել հրավերի փաթեթի զետեղումը կոմիտեի էլեկտրոնային կայքում:

4. Մրցույթի արդյունքների հաստատման և գիտական ծրագրերի ցանկերում փոփոխությունների կատարման լիազորությունը վերապահում եմ ինձ:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Լևոն Մարդոյանին:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահի
2016 թ. հունիսի 20-ի թիվ 28-Ա
հրամանի

ՀՐԱՎԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԹԵՄԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) և Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի Թեմի (այսուհետ՝ Թեմ) միջև 2016 թվականի հունվարի 19-ին կնքված «Համագործակցության մասին» մտադրությունների հուշագրի շրջանակներում Կոմիտեն և Թեմը, ցանկանալով նպաստել հայագիտական հետազոտությունների ոլորտում հայ-ռուսական գիտական համագործակցության զարգացմանը, հայտարարում են *հետազոտական խմբերի կողմից ներկայացված նախագծերի* և *երիտասարդ գիտնականների անհատական աջակցության ծրագրերի* **ՄՐՑՈՒՅԹ** (այսուհետ՝ Մրցույթ) հետևյալ ուղղություններով.

- քաղաքագիտության, պատմության, արվեստագիտության, գրականագիտության, ինչպես նաև բանակաշինության ոլորտներին նվիրված հետազոտություններ,
- Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի Թեմի պատմությանը նվիրված հետազոտություններ:

Մրցույթին հայտերը ներկայացվում են ըստ **Հավելված 1**-ում բերված գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների և մասնագիտությունների:
Մրցույթի արդյունքում կֆինանսավորվեն մինչև 6 հետազոտական նախագծեր և մինչև 2 անհատական աջակցության ծրագրեր:

1. Հետազոտական խմբերի կողմից ներկայացվող նախագծեր

Ընդհանուր դրույթներ

1.1. Նախագծերն իրականացվում են 3-ից 4 մասնակիցներից (ներառյալ խմբի ղեկավարը) կազմված հետազոտական խմբերի (այսուհետ՝ Խումբ) կողմից: Մասնակիցներից մեկը պետք է հանդիսանա ռուսաստանյան որևէ բուհի կամ գիտական կազմակերպության աշխատակից: Նախագծի հայաստանյան մասնակիցներ կարող են լինել պետական գիտական կազմակերպություններում և պետական բուհերում աշխատող գիտնականները, գիտաշխատողները (դասախոսները), առկա և հեռակա ուսուցման ասպիրանտները և մագիստրանտները:

1.2. Կոմիտեի և Թեմի կողմից ֆինանսական աջակցություն ստանալու պարտադիր պայման է հետազոտության արդյունքների հրապարակումը գիտական պարբերականներում և ամսագրերում, այդ թվում՝ միջազգային: Հետազոտությունների արդյունքները հրապարակելիս ցանկացած մասնակից պարտավոր է նշել Կոմիտեի և Թեմի կողմից ստացած աջակցության մասին՝ նշելով նախագծի ծածկագիրը, օրինակ.

- Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի և Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի Թեմի կողմից անցկացված մրցույթի արդյունքում ֆինանսավորվող №------- գիտական ծրագրի շրջանակներում:

- Исследование выполнено при поддержке Государственного комитета по науке МОН РА и Российской и Ново-Нахичеванской Епархии Армянской апостольской церкви в рамках научного проекта №....

- The research is supported by the RA MES State Committee of Science and the Russian and New Nakhichevan Diocese of the Armenian Apostolic Church, within the frames of the research project №....

1.3. Պարտադիր պայման է նաև Խմբի ղեկավարի համաձայնությունը ֆինանսավորման երաշխավորված նախագծերի և դրանց գիտական հաշվետվությունների անոտացիաների տպագիր կամ էլեկտրոնային տեսքով հրապարակման համար:

1.4. Արգելվում է՝

- միևնույն նախագիծը ներկայացնել Կոմիտեի կողմից ֆինանսավորվող այլ մրցույթների,
- Կոմիտեի կողմից անցկացվող մեկ այլ մրցույթի համար արդեն իսկ ներկայացված կամ ֆինանսավորման երաշխավորված նախագծերը ներկայացնել սույն Մրցույթին:

1.5. Մրցույթին չեն կարող մասնակցել Կոմիտեի կողմից ֆինանսավորվող միաժամանակ երկու մրցութային, այդ թվում՝ միջազգային, թեմաների (ծրագրերի) ղեկավարները կամ կատարողները (բացառությամբ անհատական խրախուսման մրցույթների շահառուների), եթե այդ թեմաները (ծրագրերը) չեն ավարտվում մինչև սույն Մրցույթի արդյունքում երաշխավորված ծրագրերի ֆինանսավորման սկիզբը:

1.6. Նախագծերի իրականացման ժամկետը **12** կամ **24** ամիս է:

1.7. Մրցույթին չեն մասնակցում այն նախագծերի հայտերը, որոնք՝

- Կոմիտե ստացվել են հայտերի ընդունման համար հայտարարված ժամկետից ուշ,
- լրացվել են ոչ ըստ հայտերին ներկայացվող պահանջների,
- անվանմամբ և (կամ) բովանդակությամբ ամբողջովին համընկնում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող (ֆինանսավորված) և իրականացվող (իրականացված) որևէ թեմայի կամ ծրագրի անվանման և (կամ) բովանդակության հետ:

2.Մասնակիցներին ներկայացվող պահանջները

2.1. Նախագծի հայաստանյան մասնակիցները պետք է հանդիսանան Հայաստանի Հանրապետության մշտական բնակիչներ և նախագծի իրականացման ընթացքում պետք է բնակվեն Հայաստանի Հանրապետությունում:

2.2. Խմբի ղեկավար կարող է լինել գիտական աստիճան ունեցող անձը, ով ունի առնվազն 5 (հինգ) տարվա գիտական կամ գիտամանկավարժական գործունեության ստաժ և վերջին 5 (հինգ) տարիների ընթացքում միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում (Scopus, Thomson Reuters և այլն), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և ԱՊՀ անդամ-պետությունների Բարձրագույն որակավորման հանձնաժողովների ցանկերում ընդգրկված գրախոսվող ամսագրերում հրատարակված առնվազն 5 (հինգ) հոդված կամ 2 (երկու)՝ առնվազն 5 (հինգ) տպագրական մամուլ ծավալով, գիտական կազմակերպության կամ բուհի գիտական խորհրդի երաշխավորություն ունեցող և ISBN նշումով հրապարակում (մենագրություն): Մեկ հրապարակումը համարժեք է գրախոսվող ամսագրերում հրապարակված 3 (երեք) հոդվածի:

2.3. Խմբի ղեկավարը և կազմակերպությունը, որտեղ իրականացվելու է նախագիծը, պետք է լինեն պաշտոնապես ձևակերպված աշխատանքային և քաղաքացիաիրավական հարաբերություններում կամ պարտավոր են ձևակերպել այդպիսի հարաբերություններ ֆինանսական աջակցությունը ստանալուց հետո:

2.4. Խմբի ղեկավար չի կարող լինել այն անձը, ով գտնվում է նախագծի մասնակցի վարչական ենթակայության տակ:

2.5. Խմբի ղեկավարը և մասնակիցները պետք է ներգրավված լինեն միայն 1 (մեկ) նախագծում:

2.6. Նախագծի հայաստանյան մասնակիցներից առնվազն մեկը պետք է լինի մինչև 35 տարեկան կամ գիտաշխատող, կամ ասպիրանտ, կամ մագիստրանտ:

2.7. Հայտն անհրաժեշտ է ներկայացնել գիտական ծրագրի տեսքով՝ սույն Հրավերի **Հավելված N 3**-ի ձևերին համապատասխան:

3. Ֆինանսական և այլ պայմանները

3.1. Մրցույթի արդյունքում երաշխավորված նախագծերի ֆինանսավորումը կսկսվի **2016 թ. սեպտեմբերից**:

3.2. Մրցույթի արդյունքում երաշխավորված նախագծերի ֆինանսավորումն իրականացվելու է Կոմիտեի և Թեմի աջակցությամբ՝ նախագծի իրականացման նպատակով կնքվելիք պայմանագրի դրույթներին համաձայն:

3.3. Նախագծի ֆինանսավորման առավելագույն ծավալները 12 ամիսների կտրվածքով կազմում են մինչև 5600,0 և 4 200,0 հազար ՀՀ դրամ՝ համապատասխանաբար 4 և 3 անձից բաղկացած խմբերի համար:

3.4. Աշխատանքի վարձատրության համար հատկացված առավելագույն գումարը 12 ամիսների կտրվածքով չպետք է գերազանցի 4800,0 հազար ՀՀ դրամը՝ 4 անձից բաղկացած Խմբի համար, 3600,0 հազար ՀՀ դրամը՝ 3 անձից բաղկացած Խմբի համար:

3.5. Գործուղումների համար նախատեսվող գումարը չպետք է գերազանցի 12 ամիսների կտրվածքով հատկացված ամբողջ գումարի 20%-ը: Մնացած գումարը կարող է բաշխվել «Սարքեր և նյութեր» բաժնում՝ ներառելով ծախսեր սարքավորումների և գրենական պիտույքների համար: 100,0 հազար ՀՀ դրամը գերազանցող ծախսերը պետք է հիմնավորվեն ֆինանսական նախահաշվի մեկնաբանության մեջ: «Այլ ծախսեր» բաժնով նախատեսված գումարի մինչև 7%-ը կարող է հատկացվել կազմակերպությանը՝ վերադիր ծախսերի համար:

3.6. 2 (երկու) շաբաթը չգերազանցող գործուղումների համար օրապահիկը և գիշերավարձն անհրաժեշտ է հաշվարկել ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված ծախսերի չափերի: Երկու շաբաթը գերազանցող գործուղումների համար Խմբի անդամները

կարող են հայցել ամսական մինչև 1500,0 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Խմբի յուրաքանչյուր անդամի օտարերկրյա գործուղումների ընդհանուր ժամանակը չպետք է գերազանցի երկու ամիսը (12 ամիսների կտրվածքով):

3.7. Ֆինանսավորման երաշխավորված հայտերի ղեկավարները պետք է ներկայացնեն ընթացիկ և ամփոփիչ հաշվետվություններ՝ ըստ նախագծի իրականացման նպատակով կնքվելիք պայմանագրի պահանջների և ժամկետների:

3.8. Ծրագրի հետագա ֆինանսավորումը դադարեցվում է ընթացիկ հաշվետվությունը սահմանված ժամկետում չներկայացնելու կամ վերջինիս վերաբերյալ հայտերի գնահատման նպատակով Կոմիտեի նախագահի հրամանով ձևավորված մասնագիտական փորձագիտական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ)՝ կողմից տրված գիտական փորձաքննության բացասական եզրակացության հիման վրա:

3.9. Խմբի ղեկավարի 2 ամիս (60 օր) Հայաստանի Հանրապետությունից անընդհատ բացակայության դեպքում նախագծի ֆինանսավորումը կդադարեցվի: Խմբի մասնակցի 2 ամիս (60 օր) Հայաստանի Հանրապետությունից անընդհատ բացակայության դեպքում Խմբի ղեկավարը 10-օրյա ժամկետում պետք է դիմի Կոմիտե՝ գիտական գործունեության արդյունավետության և տարիքային Խմբի համարժեք փոփոխություն կատարելու կամ Խմբի մասնակիցների թիվը մեկով կրճատելու առաջարկությամբ: Խմբի մասնակիցների թվի կրճատման դեպքում՝ Խմբի ղեկավարի և Կոմիտեի միջև կնքված պայմանագրի գինը ենթակա է փոփոխության:

3.10. Ֆինանսավորման երաշխավորված նախագծերի ցանկը կհրապարակվի Կոմիտեի պաշտոնական կայքում՝ **www.scs.am**:

4. Երիտասարդ գիտնականների անհատական աջակցության կրթաթոշակի մրցույթ

4.1. Երիտասարդ գիտնականների անհատական աջակցության կրթաթոշակի մրցույթի (այսուհետ՝ Կրթաթոշակի մրցույթ) շրջանակներում նախատեսվում է անհատ գիտնականներին 6-ից 12 ամիս տևողությամբ աջակցության տրամադրում՝ կրթաթոշակի ձևով:

4.2. Կրթաթոշակի մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության մշտական բնակիչ հանդիսացող պետական գիտական կազմակերպություններում և պետական բուհերում ընդգրկված մինչև 35 տարեկան կամ գիտաշխատողները, կամ դասախոսները, կամ ասպիրանտները, կամ հայցորդները:

4.3. Կրթաթոշակը տրամադրվում է սույն Հրավերի նախաբանում թվարկված թեմատիկ ուղղությունների շրջանակներում գիտական ծրագրի տեսքով ներկայացված հետազոտությունը Ռուսաստանի Դաշնության արխիվներում իրականացնելու նպատակով:

4.4. Կրթաթոշակի ամսական առավելագույն չափը 80 000 ռուսական ռուբլի է, որն ամբողջությամբ կտրամադրվի Թեմի միջոցների հաշվին: Կրթաթոշակի շահառուների ճանապարհածախսը կկատարվի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

4.5. Հայտն անհրաժեշտ է ներկայացնել գիտական ծրագրի տեսքով՝ սույն Հրավերի **Հավելված N 5-ի** ձևին համապատասխան:

4.6. Ասպիրանտները և հայցորդները պետք է ներկայացնեն տեղեկանք գիտական կազմակերպության (բուհի) ասպիրանտ հանդիսանալու կամ հայցորդի դեպքում՝ գիտական կազմակերպությանը (բուհին) հայցորդի կցված լինելու մասին, որտեղ նշված է ուսուցման ձևը (առկա կամ հեռակա) և տարին:

4.7.Կրթաթոշակի շահառուները կորոշվեն հայտերի գիտական փորձաքննության ընթացքում, որի ընդհանուր կարգն ու պայմանները սահմանված են սույն Հրավերի 6-րդ կետում:

5. Հայտերի լրացնելը և ներկայացնելը

5.1. Հայտն անհրաժեշտ է ներկայացնել մեկական տպագիր և էլեկտրոնային (խտասկավառակ) տարբերակներով:

5.2. Հայտն անհրաժեշտ է Կոմիտե ներկայացնել Խմբի ղեկավարի **(Հավելված N 2)** և անհատական աջակցության Կրթաթոշակի մրցույթի հայտատուի **(Հավելված 4)** գրավոր դիմումով՝ աշխատանքային օրերին ժամը 10:00 - 13:00 և 14:00 - 17:00, ք. Երևան, Օրբելի եղբայրների 22, 7-րդ հարկ, 708 սենյակ:

5.3. Հայտերն ընդունվում են **2016 թ. հունիսի 21-ից մինչև 2016 թ. հուլիսի 29 -ը** ներառյալ (ժամը 17^{00}):

5.4. Խմբի ղեկավարի/հայտատուի ստորագրությունը պետք է լինի կազմակերպության գիտական քարտուղարի կամ ղեկավարի ստորագրությամբ հաստատված և կազմակերպության կնիքով վավերացված:

5.5. Հայտն անհրաժեշտ է ներկայացնել A4 ձևաչափի թղթի վրա տպված, 1.5 տողամեջ հեռավորությամբ, 12 չափի «Unicode» տառատեսակով («Sylfaen»՝ հայերեն և «Times New Roman»՝ անգլերեն ու ռուսերեն տեքստերի համար)՝ պահպանելով հայտի ձևերում առկա

աղյուսակների ամբողջականությունը: Հայտի էլեկտրոնային տարբերակը պետք է ներկայացնել «Microsoft Word» ձևաչափով, մեկ ամբողջական ֆայլով, որի ծավալը չպետք է գերազանցի 4 մեգաբայթը (Mb):

5.6. Խմբի անունից հանդես գալու իրավունք ունի միայն Խմբի ղեկավարը:

5.7. Կոմիտեն անցկացնում է ստացված հայտերի տեխնիկական ստուգում: Այն հայտերը, որոնք տեխնիկական ստուգման ընթացքում կճանաչվեն սույն հրավերի պահանջներին համապատասխանող, կներկայացվեն գիտական փորձաքննության:

6. Նախագծերի գիտական փորձաքննությունը

6.1. Հայտերը ենթարկվում են անկախ գիտական փորձաքննության: Գիտական փորձաքննության կազմակերպչի և փորձագետների կողմից հայտերի բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի և արդյունքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումն այլ անձանց արգելվում է:

6.2. Հայտերը տրամադրվում են Խորհրդին՝ Կոմիտեի փորձագետների շտեմարանում ընդգրկված փորձագետների ներգրավմամբ գիտական փորձաքննությունն իրականացնելու համար:

6.3. Փորձաքննությունն իրականացնելիս փորձագետն առաջնորդվում է գիտական փորձաքննության գնահատման թերթիկով (**Հավելված N 7, 8):**

6.4. Հայտը գիտական փորձաքննության է ենթարկվում առնվազն 2 (երկու) փորձագետի կողմից: Յուրաքանչյուր հայտի համար փորձագետն առցանց լրացնում է գիտական փորձաքննության գնահատման թերթիկը՝ պատասխանելով դրանում առաջադրված բոլոր հարցերին: Փորձագետի գնահատականը կազմում է գնահատման սանդղակի առավելագույն միավորի առնվազն 75 տոկոսը:

6.5. Երկու փորձագետների գնահատականները գնահատման սանդղակի առավելագույն միավորի 50% և ավելի չափով տարբերվելու դեպքում հայտը տրվում է երրորդ փորձագետին՝ գիտական փորձաքննության: Այդ դեպքում, գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երեք փորձագետների երկու իրար մոտ գնահատականների միջին թվաբանականն է:

6.6. Խմբի ղեկավարի/հայտատուի (Խմբի դեպքում՝ նաև մասնակիցների) մասնագիտական որակավորումը և համապատասխանությունը հայտի գիտական խնդիրները լուծելուն գնահատվում է Խորհրդի կողմից, որի գնահատականը կազմում է գնահատման սանդղակի առավելագույն միավորի առնվազն 25 տոկոսը:

6.7. Հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երկու փորձագետների գնահատականների միջին թվաբանականի և Խորհրդի գնահատականի գումարն է:

6.8. Գիտական փորձաքննության ժամանակ գնահատվում են հայտի գիտական և գիտատեխնիկական նորույթը և արդիականությունը, գիտության տվյալ բնագավառում Խմբի ձեռքբերումները և նրանց մասնագիտական որակավորման համապատասխանությունը, երիտասարդ (մինչև 35 տարեկան) մասնագետների մասնագիտական համապատասխանությունը, նախագծի իրականացման նախադրյալները, փուլերը և ժամկետները, պահանջվող ֆինանսական միջոցների հիմնավորվածությունը և գիտության տվյալ բնագավառի առանձնահատկություններով պայմանավորված այլ խնդիրներ:

6.9. Յուրաքանչյուր հայտատու իր ներկայացրած հայտի փորձաքննության արդյունքների մասին կծանուցվի գրավոր: Կոմիտեն Խմբի ղեկավարին/ հայտատուին տրամադրում է գիտական փորձաքննության արդյունքները, որոնք ներառում են փորձագետների եզրակացությունները՝ ապահովելով փորձագետի անանունությունը, Խորհրդի գնահատականները, շեմային գնահատականը, հայտի վերջնական գնահատականը:

6.10. Մրցույթի արդյունքների բողոքարկման փուլ նախատեսված չէ:

Մրցույթի պատասխանատու

Գիտական գործունեության կազմակերպման վարչության

միջազգային համագործակցության բաժին

Հեռ.՝ 21 01 40 + 119

Հավելված N 1

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԻՉՆԵՐՈՎ

5. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.5. Իրավունք

5.6 Քաղաքական գիտություններ

6 ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6.1 Պատմություն

6.2 Գրականագիտութուն

6.4 Աստվածաբանություն, կրոնագիտություն

6.5 Արվեստագիտություն

Հավելված N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

ՔԱՂԱՔԱՑԻ _____
(անուն, հայրանուն)
_____ ից
(ազգանուն)
_____
(հասցե)
_____
(հեռախոս)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ընդունել կից ներկայացվող հայտը ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի և Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի Թեմի կողմից **գիտահետազոտական խմբերի համար** հայտարարված մրցույթին մասնակցելու համար:

Դիմող՝_____ (_____)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

«____» _____ 2016 թ.

Հավելված N 3

Ձև 3.1

Գիտահետազոտական խմբերի կողմից ներկայացվող նախագծի

ՀԱՅՏ

Հայտը հանձնված է «_____» _____ 2016 թ. Ծածկագիր՝ _____

(լրացվում է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեում)

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

1. Հայտի
   - վերնագիրը (15 բառից ոչ ավելի՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն)

     _____

     _____
   - բնագավառը _____
   - մասնագիտական դասիչը _____
2. Հուշող (բանալի) բառեր (հայերեն, ռուսերեն և անգլերեն)

   _____

   _____
3. Խմբի ղեկավարի
   - ազգանունը, անունը, հայրանունը _____
   - ծննդյան թիվը _____
   - գիտական աստիճանը _____
   - պաշտոնը _____
   - հեռախոսը _____
   - էլեկտրոնային հասցեն _____
4. Կազմակերպության լրիվ, կրճատ անվանումները,կազմակերպաիրավական ձևը և գերատեսչական պատկանելությունը_____
5. Կազմակերպության հասցեն, հեռախոսը և էլեկտրոնային հասցեն _____
6. Նախագծի կատարման համար անհրաժեշտ ժամանակահատվածը _____ ամիս
7. Խմբի (ներառյալ ղեկավարը) անդամների թիվը _____
8. Աշխատանքի վարձատրության (ներառյալ եկամտային հարկը) գումարը _____ հազար դրամ
9. Վերադիր ծախսերի գումարը _____ հազար դրամ

10. Հայցվող ընդհանուր գումարը _____ հազար դրամ
11. Խմբի ղեկավարի ստորագրությունը _____
12. Կազմակերպության գիտական քարտուղարի (կամ ղեկավարի) ստորագրությունը

_____

«____» _____ 2016 թ.

Կ.Տ.

ՆԱԽԱԳԾԻ ԱՆՈՏԱՑԻԱ*

* *Համառոտ պարբերություններով հայերեն, անգլերեն և ռուսերեն ներկայացնել նախագծի նպատակները:*

ՆԱԽԱԳԻԾ*

* *1. ներկայացնել խնդրի դրվածքը, դրա արդի վիճակը, նախագծի գիտական նպատակները, հետազոտական ծրագիրը, իրականացման եղանակները, առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները (մինչև 8 էջ)*
2. նշել տվյալ ուղղությամբ խմբի ունեցած ձեռքբերումները և ակնկալվող արդյունքները (մինչև 2 էջ)
3. նկարագրել նախագծի ռուսաստանյան մասնակցի կողմից իրականացվելիք խնդիրները (մինչև 2 էջ)
4. օգտագործված գրականության ցանկը:

ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

1. Ազգանուն, անուն, հայրանուն _____
(հայերեն, անգլերեն և ռուսերեն)
2. Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը _____
3. Գիտական աստիճանը _____
4. Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվը և վայրը

_____

5. Հրատարակված

- գիտական հոդվածներ (թիվը) _____
- մենագրություններ (թիվը) _____

6. Վերջին 5 տարում հրատարակված գիտական հոդվածներ

(նշել վերնագիրը, ամսագիրը, տարին, հատորը, էջերը)

1) _____
2) _____
(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

7. Նշել Կոմիտեից և այլ աղբյուրներից ստացված դրամաշնորհները

1) _____
2) _____
(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

«____» _____ 2016 թ. _____
(ղեկավարի ստորագրությունը)

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍԻՆ*

Ազգանուն, անուն, հայրանուն (հայերեն)	
Ազգանուն, անուն, հայրանուն (անգլերեն)	
Ազգանուն, անուն, հայրանուն (ռուսերեն)	
Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը	
Կրթությունը (բուհ, մասնագիտություն)	
Գիտական աստիճանը	
Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվն ու վայրը	
Աշխատանքի վայրը, պաշտոնը	
Հեռախոսը (աշխ., բն., բջջ.)	
Էլեկտրոնային հասցե	
Հրատարակված գիտական հոդվածները՝ այդ թվում նախագծին առնչվող հոդվածները (նշել վերնագիրը, ամսագիրը, տարին, հատորը, էջերը), 5-ից ոչ ավելի	
1. 2.	

* *Լրացվում է յուրաքանչյուր մասնակցի համար:*

Ձև 3.4

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱԳԾԻ ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍԻՆ*

Ազգանուն, անուն, հայրանուն (հայերեն)	
Ազգանուն, անուն, հայրանուն (անգլերեն)	
Ազգանուն, անուն, հայրանուն (ռուսերեն)	
Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը	
Կրթությունը (բուհ, մասնագիտություն)	
Գիտական աստիճանը	
Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվն ու վայրը	
Աշխատանքի վայրը, պաշտոնը	
Հեռախոսը (աշխ., բն., բջջ.)	
Էլեկտրոնային հասցե	
Հրատարակված գիտական հոդվածները՝ այդ թվում նախագծին առնչվող հոդվածները (նշել վերնագիրը, ամսագիրը, տարին, հատորը, էջերը), 5-ից ոչ ավելի	
1. 2.	

* *Լրացվում է յուրաքանչյուր մասնակցի համար:*

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հայտի ծածկագիրը _____

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ (ներառյալ եկամտային հարկ)									
	2016 թ. Սեպտեմբեր -դեկտեմբեր			**2017 թ.**			**2018 թ. Հունվար-օգոստոս**		
Ազգանուն, անուն, հայրանուն	Անվանում	Անձնների քանակը	Դահանջ-ների գումարը	Անվանում	Անձնների քանակը	Դահանջ-ների գումարը	Անվանում	Անձնների քանակը	Դահանջ-ների գումարը
1)									
2)									
3)									
4)									
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ									

ԱՅԼ ԾԱԽՍԵՐ, այդ թվում			
1. ՍԱՐՔԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ (100,0 հազար ՀՀ դրամը գերազանցող բոլոր ծախսերը հիմնավորվել ծախսերի նախահաշվի մեկնաբանության մեջ)	2016 թ. **Սեպտեմբեր - դեկտեմբեր**	2017 թ.	2018 թ. **Հունվար-օգոստոս**
1)			
2)			
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ			
2. ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ (հիմնավորել ծախսերի նախահաշվի մեկնաբանության մեջ)			
1) տեղական գործուղումների տրանսպորտային ծախսեր			
2) տեղական գործուղումների օրապահիկ			
3) տեղական գործուղումների գիշերավարձ			
4) օտարերկրյա գործուղումների տրանսպորտային ծախսեր			
5) օտարերկրյա գործուղումների օրապահիկ			
6) օտարերկրյա գործուղումների գիշերավարձ			
7) գործուղումների հետ կապված այլ ծախսեր (վիզա կամ այլ վճարումներ)			
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ			
3.ՎԵՐԱԴԻՐ ԾԱԽՍԵՐ			
ՀԱՅՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ			

Խմբի ղեկավար՝ _____ _____
(ստորագրություն) *(անուն, ազգանուն)*

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ _____
(ստորագրություն) *(անուն, ազգանուն)*

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ*

* *Բացատրել և հիմնավորել ֆինանսական նախահաշվի բոլոր կետերը*

Հավելված N 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

ՔԱՂԱՔԱՑԻ _____
(անուն, հայրանուն)
_____ ից
(ազգանուն)
_____
(հասցե)
_____
(հեռախոս)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ընդունել կից ներկայացվող հայտը ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի և Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի Թեմի կողմից **Երիտասարդ գիտնականների անհատական աջակցության կրթաթոշակի համար** հայտարարված մրցույթին մասնակցելու համար:

Դիմող՝_____ (_____)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

«____» _____ 2016 թ.

Ձև

Երիտասարդ գիտնականների անհատական աջակցության կրթաթոշակ

ՀԱՅՏ

Հայտը հանձնված է «_____» _____ 2016 թ. Ծածկագիր՝ _____
(լրացվում է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեում)

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

1. Հայտի
- վերնագիրը *(15 բառից ոչ ավելի՝ հայերեն, անգլերեն եւ ռուսերեն լեզուներով)*

_____

_____

- բնագավառը _____
- մասնագիտական դասիչը _____

2. Հուշող *(բանալի)* բառեր *(հայերեն եւ անգլերեն լեզուներով)* _____

3. Տեղեկություններ հայտատուի վերաբերյալ

Ա.Ա.Հ. *(լրիվ)*	հայերեն			
	անգլերեն			
	ռուսերեն			
Ծննդյան տարեթիվը, ծննդավայրը				
Հասցեն, հեռախոսը (աշխ., բն., բջջ), էլեկտրոնային հասցեն				
Կրթությունը (բուհ, մասնագիտություն)				
Ասպիրանտուրա ընդունվելու / հայցորդ ձևակերպվելու տարեթիվը			Բնագավառը	
Աշխատանքի վայր/պաշտոն				
ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեից նախկինում ստացե՞լ եք դրամաշնորհ			**Այո** ☐	**Ոչ** ☐
Եթե «Այո» , ապա նշեք թեման և դրամաշնորհի ծածկագիրը.				
Հրատարակված գիտական հոդվածները՝ այդ թվում նախագծին առնչվող հոդվածները (նշել վերնագիրը, ամսագիրը, տարին, հատորը, էջերը) 1. 2, ,,,				

4. Գերատեսչությունը _____

5. Գիտական կազմակերպության (բուհի)

- լրիվ, կրճատ անվանումները և կազմակերպաիրավական ձևը _____
- հասցեն _____
- հեռախոսը _____
- էլեկտրոնային հասցեն _____

6. Ծրագրի կատարման համար անհրաժեշտ ժամանակահատվածը _____ ամիս

7. Հայտատուի ստորագրությունը _____

8. Գիտական կազմակերպության (բուհի) տնօրենի (ռեկտորի) կամ գիտական քարտուղարի ստորագրությունը _____

«____» _____ 2016թ.

Կ.Տ.

ՆԱԽԱԳԻԾ*

Ներկայացնել խնդրի դրվածքը, դրա արդի վիճակը, նախագծի գիտական նպատակները, հետազոտական ծրագիրը, իրականացման եղանակները, պլանը, առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները, ակնկալվող արդյունքները, օգտագործված գրականության ցանկը (մինչև 3 էջ):

ՄԻՆՉԵՎ ԵՐԵՔ ԱՆՑԱՆԿԱԼԻ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ*

№	ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ
1.	
2.	
3.	

* *Թույլատրվում է նշել մինչև 3 (երեք) անցանկալի փորձագետների անուն: Այս մասը գաղտնի է, հասանելի է միայն գիտական փորձաքննությունը կազմակերպողներին և չի ընդգրկվելու հայտի պաշտոնական տարբերակի մեջ: Այն օգտագործվելու է միայն հայտի գիտական փորձաքննությունն իրականացնող փորձագետների կազմում նշված անձանց ընդգրկելը բացառելու համար:*

Փորձագիտական եզրակացություն, հայտ _____

Ղեկավարի ազգանունը _____

Հարցաշարի յուրաքանչյուր հարցի պատասխանը տրվում է թվային գնահատականով, առավելագույնը 5 միավոր **(0,5 միավորի ճշտությամբ),** հետևյալ սանդղակով.

0	*Հարցի պատասխանը **բացակայում է** կամ այն չի կարող որոշվել տեղեկատվության բացակայության պատճառով:*
1	***Շատ վատ:*** *Պատասխանը ներկայացված է մակերեսորեն և խիստ անորոշ:*
2	***Վատ:*** *Հարցի պատասխանը բավարար չէ նրա վերաբերյալ ամբողջական կարծիք կազմելու համար:*
3	***Միջին:*** *Պատասխանը ընդհանուր առմամբ բավարարում է հարցի պահանջներին, բայց կան նաև զգալի թվով անհամապատասխանություններ, որոնք սակայն շտկելի են:*
4	***Լավ:*** *Հարցի պատասխանը առաջադրված պահանջներին համապատասխանում է որոշակի վերապահումներով:*
5	***Գերազանց:*** *Պատասխանը լիովին համապատասխանում է հարցի պահանջներին և թերություններն աննշան են:*

Հարցաշար

1.	**Արդիականություն և նորույթ**: Որքանո՞վ է արդիական և հեռանկարային առաջարկվող հետազոտությունը:	
2.	**Նախադրյալներ:** Որքանո՞վ են բավարար խմբի անդամների գիտագործնական ձեռքբերումները գիտության տվյալ բնագավառում:	
3.	**Ծրագիր:** Որքա՞ն հստակ է ձևակերպված գիտական ծրագիրը:	
4.	**Մեթոդներ և պլան:** Որքանո՞վ են նախագծի պլանը և առաջարկվող մեթոդները համապատասխանում հետազոտության նպատակների իրականացմանը:	
5.	**Արդյունք:** Որքանո՞վ են նշանակալից ակնկալվող արդյունքները՝ գիտական և գործնական տեսանկյուններից:	
6.	**Երիտասարդ մասնագետներ:** Որքանո՞վ են համապատասխանում երիտասարդ մասնագետների (մինչև 35 տարեկան), ասպիրանտների/մագիստրանտների մասնագիտական ուղղվածությունը գիտական ծրագրի իրականացմանը:	
7.	**Նպատակահարմարություն**: Որքանո՞վ է նպատակահարմար համատեղ հետազոտությունների իրականացումը նախագծում դրված խնդիրների լուծման համար:	
8.	**Համագործակցություն:** Ի՞նչ մակարդակի վրա է գտնվում միջազգային համագործակցությունը (0՝ եթե համագործակցություն առկա չէ):	
9.	**Նախահաշիվ:** Որքանո՞վ են պահանջվող ֆինանսական միջոցները բավարար գիտական ծրագրի իրականացման համար:	
	Փորձագետի գնահատական (9 գնահատականների գումարը)	

Փորձագետի մեկնաբանություններ (պարտադիր է, ծավալը չի սահմանափակվում)

_____

_____

_____

Փորձագետ _____ Ամսաթիվ_____

Խորհրդի եզրակացություն

1.	**Գիտական ծրագրի ղեկավար:** Որքանո՞վ է համապատասխանում Խմբի ղեկավարի մասնագիտական որակավորումը գիտական ծրագրի իրականացմանը:	
2.	**Գիտական ծրագրի ռուսաստանյան մասնակից:** Որքանո՞վ է համապատասխանում ռուսաստանյան մասնակցի մասնագիտական որակավորումը գիտական ծրագրի իրականացմանը:	
3.	**Հայաստանյան խումբ:** Որքանո՞վ են համապատասխանում Խմբի մասնակիցների մասնագիտական որակավորումը գիտական ծրագրի իրականացմանը:	
	Խորհրդի անդամի գնահատականը (3 գնահատականների գումարը)	
	Վերջնական գնահատական (Փորձագետի և հանձնաժողովի գնահատականների գումարը)	

Խորհրդի անդամ(ներ)_____

(անուն, ազգանուն) (ստորագրություն) Ամսաթիվ_____

Փորձագիտական եզրակացություն, հայտ _____

Հայտատուի ազգանունը _____

Հարցաշարի յուրաքանչյուր հարցի պատասխանը տրվում է թվային գնահատականով, առավելագույնը 5 միավոր **(0,5 միավորի ճշտությամբ),** հետևյալ սանդղակով.

0	*Հարցի պատասխանը **բացակայում է** կամ այն չի կարող որոշվել տեղեկատվության բացակայության պատճառով:*
1	***Շատ վատ:*** *Պատասխանը ներկայացված է մակերեսորեն և խիստ անորոշ:*
2	***Վատ:*** *Հարցի պատասխանը բավարար չէ նրա վերաբերյալ ամբողջական կարծիք կազմելու համար:*
3	***Միջին:*** *Պատասխանը ընդհանուր առմամբ բավարարում է հարցի պահանջներին, բայց կան նաև զգալի թվով անհամապատասխանություններ, որոնք սակայն շտկելի են:*
4	***Լավ:*** *Հարցի պատասխանը առաջադրված պահանջներին համապատասխանում է որոշակի վերապահումներով:*
5	***Գերազանց:*** *Պատասխանը լիովին համապատասխանում է հարցի պահանջներին և թերություններն աննշան են:*

Հարցաշար

1.	**Արդիականություն**: Որքանո՞վ է արդիական և հեռանկարային առաջարկվող հետազոտությունը	
2.	**Ծրագիր:** Որքա՞ն հստակ է ձևակերպված գիտական ծրագիրը, և որքանո՞վ է այն համապատասխանում հետազոտության նպատակների ձեռքբերմանը:	
3.	**Մեթոդներ և պլան:** Որքանո՞վ են նախագծի պլանը և առաջարկվող մեթոդները համապատասխանում հետազոտության նպատակների իրականացմանը:	
4.	**Արդյունք:** Որքանո՞վ են նշանակալից ակնկալվող արդյունքները՝ գիտական և գործնական տեսանկյուններից:	
	Փորձագետի գնահատական (4գնահատականների գումարը)	

Փորձագետի մեկնաբանություններ (պարտադիր է, ծավալը չի սահմանափակվում)

_____

_____

_____

Փորձագետ _____ Ամսաթիվ_____

Խորհրդի եզրակացություն

1.	**Հայտատու:** Որքանո՞վ է համապատասխանում հայտատուի մասնագիտական որակավորումը գիտական ծրագրի իրականացմանը:	
2.	**Ժամանակահատված**: Որքանո՞վ է ծրագիրը համապատասխանում հետազոտության նպատակների ձեռքբերմանը նշված ժամանակահատվածում:	
	Խորհրդի անդամի գնահատականը (2 գնահատականների գումարը)	
	Վերջնական գնահատական (Փորձագետի և հանձնաժողովի գնահատականների գումարը)	

Խորհրդի անդամ(ներ)_____

(անուն, ազգանուն) (ստորագրություն) Ամսաթիվ_____